ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԵԴ - 02- 2025
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «30» «01» 2025 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՊՐՈԴԻՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Աիդա Ոփյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 13-ի N 1998-Ա հրամանով հաստատված «Թրաֆիքինգի ռիսկերի մասին երիտասարդների իրազեկում» դրամաշնորհի հատկացման մրցույթի գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 15-ի նիստի 03/25 արձանագրությունը՝ որոշման «1115. Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11002. Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներ» միջոցառման (տող՝ «Թրաֆիկինգի ռիսկերի մասին երիտասարդների իրազեկում») շրջանակներում «Թրաֆիկինգի ռիսկերի մասին երիտասարդների իրազեկում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳԻՆԸ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված գումարից 2550.0 հազար (երկու միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) դրամ՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված N 1-ում, իսկ ծրագրի նկարագիրը՝ Հավելված N 3-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով

թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել ֆինանսավորումը,

2.1.6. սույն պայմանագիրը << օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ ծրագրի արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված ծրագրի մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն

իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.2. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան հաշվառում,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. պետական մարմնի կողմից ծրագրի իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7. իրականացնել ծրագրերի հանրայնացման անհրաժեշտ գովազդատեղեկատվական արշավներ սոցիալական հարթակներում (տոմսերի վաճառքի հարթակները սոցիալական հարթակներ չեն համարվում): Միջոցառումների իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ազդագրեր, հրավիրատոմսեր, պաստառներ՝ ներառյալ էլեկտրոնային տարբերակները) պարտադիր կերպով հրապարակել ՀՀ զինանշանը և պետական մարմնի անվանումը՝ պահպանելով «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Գովազդատեղեկատվական բնույթի այլ հրապարակումներում (մամուլի հրապարակումներ, համերգային ծրագիր-բուկլետներ, տեսահոլովակներ, մամլո հաղորդագրություններ, ասուլիսներ, գրավոր և/կամ բանավոր այլ խոսք) կազմակերպությունը պարտավոր է ոչ միայն հրապարակել ՀՀ զինանշանն ու պետական մարմնի անունը, այլև նշել ԿԳՄՄՆ մասնակցության ձևաչափը (ԿԳՄՄՆ ֆինանսավորմամբ, ԿԳՄՄՆ աջակցությամբ), որը կարող է արտահայտվել ինչպես ուղղակի ֆինանսավորման, այնպես էլ թատերահամերգային դահլիճների տրամադրման և կազմակերպական այլ աջակցության տեսքով:

Համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ միջոցառումներին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.8. սույն պայմանագրից բխող ծրագիրը չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 1.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.9. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան, իսկ միջոցառումների համար կազմակերպության կողմից ընդգրկվող աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորել ՀՀ Աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով,

2.4.10. սույն պայմանագրի 7.1-ին կետով սահմանված ժամկետներում պաշտոնական գրությամբ պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 4-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար: Բովանդակային հաշվետվությամբ ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով՝ համաձայն հավելված N 5-ի: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար:

2.4.11. սույն պայմանագրով սահմանված ծրագրի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1. Պետական մարմիը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով

գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (Հավելված N 6) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված ծրագիրը կամ դրա մի մասը չի համապատասխանում սույն պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում սույն պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում սահմանված գումարի 80%-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո՝ ապրիլ ամսին, իսկ 20%-ը՝ սույն պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

5.2. Համաձայն «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2025 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

5.3. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում

ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել ծրագրի իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Սույն պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը մինչև 2025 թվականի հուլիսի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

7.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.3. Սույն պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում

արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանի լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.2.Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինն այն ուղարկում է նաև Կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.4. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի	«ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ
և սպորտի նախարարություն	ք. Երևան, Վարդանանց փող., շ. 22, բն. 118
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 2052222098971001, ՀՎՀՀ 01278077
Հ/Հ 900011032670, ՀՎՀՀ 02698732	info@weprodigi.com
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
Հ. Հակոբյան	Ա. Ոփյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«30» «01» 2025
թ.
N ԵԴ-02-2025 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N N Ը/Կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Ինֆոգրաֆիկայի պատրաստում	3 հատ ինֆոգրաֆիկայի պատրաստում	Սահմանելու ենք կոնկերտ նպատակ, թե ինչու ենք ստեղծում ինֆոգրաֆիկաները, հավաքագրելու ենք տվյալներ, պլանավորելու ենք թե կոնկերտ ինչ կառուցվածք է ունենալու, ստեղծելու ենք դիզայնը, հրապարակելու ենք ստեղծված արդյունքը	Երիտասարդները կստանան տեղեկություն թրաֆիքինգի մասին՝ դրա ձևերի, վտանգների, և ինչպես այն կարելի է ճանաչել:Կսովորեն պաշտպանել իրենց և իրենց շրջապատը թրաֆիքինգի ցանցերից:Կիմանան, թե որտեղ և ինչպես կարող են օգնություն ստանալ՝ թրաֆիքինգի հնարավոր զոհ դառնալու դեպքում: Այս միջոցառման	30. 06. 2025 թ.	Ինֆոգրաֆիկ նյութերի հանձնում, դրանց տարածման մասին հաշվետվության ներկայացում	225.0

				մասնակից են լինելու առնվազն 200 երիտասարդ			
2	Հոլովակի պատրաստում	Առնվազն 15 վայրկյան անոց 2 հոլովակի պատրաստում	Պրոյեկտ մենեջերի միջոցով ընդհանուր պրոյեկտի մենեջմենթի իրականացում: Վիդեոների ստեղծման փուլում դրանց կրեատիվ դիզայնի, կոնտենտի ստեղծման, Սկրիպտի ստեղծման, դիզայներական, անիմացիոն ու ձայնային ձևավորման աշխատանքների իրականացում	2 հատ անիմացիոն հոլովակի ստեղծում «Թրաֆիքինգի ռիսկերի մասին երիտասարդների իրազեկման» թեմայով: Այս միջոցառման մասնակից են լինելու առնվազն 200 երիտասարդ:	30. 06. 2025 թ.	2 վիդեոների հանձնում ու կատարված աշխատանքն ե րի համար հաշվետվությա ն ներկայացում	280.0
3	Թեստի պատրաստում	Թրաֆիք ինգի վերաբերյ ալ գիտելիքն երի գնահատ ման հարցաշ ար-թեստի	Սահմանելու ենք հիմնական թեմաները՝ Թրաֆիքինգի հասկացությունը, Դրա ձևերը (աշխատանքային, սեռական շահագործում և այլն),	Թեստը հնարավորություն կտա տարբերակել, թե որքան տեղեկացված են երիտասարդները թրաֆիքինգի վերաբերյալ, վերլուծել, թե որքանով է թեստը նպաստել տեղեկատվության ընկալմանը և պահելուն, շեշտադրել, թե որ թեմաներն են առավել բարդ երիտասարդների	30. 06. 2025 թ.	Թեստի արդյունքների մասին հաշվետվության ներկայացում	666.7

		պատասխանատու անձ՝ Մարմնի ղեկավարներ՝ Ամենամյա գնահատման ենթակա աշխատակիցներ՝ Ամենամյա գնահատման ենթակա աշխատակիցներ՝ Ամենամյա գնահատման ենթակա աշխատակից

4	Գովազդային արշավներ	Գովազդային արշավներ սոց ցանցերում (Ֆեյսբուք (facebook) , Ինստագրամ (Instagram), Տիկտոկ (TikTok))	Ստեղծելու ենք գավազդային ռազմավարություն ու իրականցնելու ենք տարբեր գովազդային արշավներ թիրախային խմբերին հասնելու ու տեղեկացվածության բարձրացման համար	Երիտասարդների մոտ առանց խուճապ առաջացնելու թրաֆիքինգի մասին իրազեկվածության բարձրացում: Գովազդների արդյունքում ապահովելու ենք Հասանելիություն (Reach) – առնվազն 250.000 Ցուցադրություն (Impression) – առնվազն 500.000: Գովազդները ցուցադրվելու են օրական առնվազն 2 անգամ, առնվազն 30 վայրկյան տևողությամբ: Այս միջոցառման մասնակից են լինելու առնվազն 1000 երիտասարդ (Հայտով նախատեսված է առնվազն 200 երիտասարդ, բայց մենք նախատեսում ենք առնվազն 1000 հոգու իրազեկել)	30. 06. 2025 թ.	Գովազդների ավարտից հետո հաշվետվություն ներկայացում	375.0
5			Հավաքագրելու ենք նյութեր ու տվյալներ, զրուցելու ենք	Տարածել տեղեկություններ թրաֆիքինգի մասին՝ ներառյալ դրա ձևերը,	30. 06. 2025 թ.		

	Հասարակայնության հետ կապերի (PR) հոդվածի ստեղծում և տարածում	2 հատ Հասարակայնության հետ կապերի (PR) հոդված և դրանց տարածում սոց ցանցերում	համապատասխան մասնագետների հետ,ձևակերպելու ենք հոդվածների հիմնական ուղերձը, մշակելու ենք կառուցվածքը, ընտրելու ենք մեդիա պլատֆորմերը որտեղ պետք է հոդվածը տեղադրվի երիտասարդների ու նրանց ծնողների շրջանում ավելի լայն տարածում գտնելու նպատակով, գնահատելու ենք վերջնական արդյունները	մեխանիզմները և հետևանքները, Հաղորդել, թե ինչպես կարելի է պաշտպանվել թրաֆիքինգի զոհ դառնալուց, տրամադրել կոնկրետ տեղեկատվություն այն մասին, թե ինչ անել կասկածելի իրավիճակներում, Խրախուսել երիտասարդներին, որ նրանք կարող են և պետք է դիմեն օգնության, Հոդվածների միջոցով աջակցել լայնածավալ իրազեկման արշավներին, որոնք ուղղված են թրաֆիքինգի դեմ պայքարին: Հոդվածները տարածելու ենք Ֆեյսբուք (facebook) և Նեյթիվ Նեթորք (Native Network) գովազդային հարթակներում, Այս միջոցառման մասնակից են լինելու առնվազն 500 երիտասարդ: (Հայտով նախատեսված է առնվազն 200 երիտասարդ, բայց մենք նախատեսում		Հոդվածների տարածման ու ընթերցվածության մասին հաշվետվության ներկայացում	245.0

				ենք առնվազն 500 հոգու իրազեկել)			
6	Կարծիքի առաջատարի (ինֆլյուենսեր) ինտեգրում	Սոցիալական մեդիա հարթակներում 1 հոգի կարծիքի առաջատարի (ինֆլյուենսեր) միջոցով իրազեկում	Սահմանելու ենք, թե ինչ նպատակով եք համագործակցում ինֆլուենսերների հետ՝ • Երիտասարդների շրջանում իրազեկման մակարդակի բարձրացում, • Թեմայի շուրջ հանրային քննարկումների խրախուսում, • Կոնկրետ գործողությունների խթանում (օր.՝ թեստերի անցկացնում, զեկույցների ուղարկում): Ընտերլու ենք ինֆլյուենսեր ով ունի համապատասխան լսարան, վայելում է վստահություն այդ լսարանի կողմից: Որոշելու ենք, թե ինչ ձևաչափով պետք է ինֆլուենսերը ներկայացնի թեման,տրամադրելու ենք ինֆլուենսերին հստակ ուղեցույցներ	Թրաֆիքինգի մասին տեղեկատվությունը կհասնի լայն լսարանին, հետևորդները կխոսեն իրենց փորձի, մտահոգությունների մասին և կհետաքրքրվեն խնդրի լուծման ուղիներով, նրանք նաև կարող են նպաստել թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայի հանրայնացմանը՝ այն դարձնելով քննարկման առարկա թե՛ առցանց, թե՛ առօրյա կյանքում, որպես լսարանի վստահելի ձայներ, կարող են խրախուսել երիտասարդներին դիմել օգնության կամ կիսվել իրենց մտահոգություններով: Այս միջոցառման մասնակից են լինելու առնվազն 1000 երիտասարդ (Հայտով նախատեսված է առնվազն 200 երիտասարդ, բայց մենք նախատեսում	30. 06. 2025 թ.	ինֆլուենսերների հրապարակումների ներգրավվածության ցուցանիշների վերլուծության տրամադրում՝ հավանումներ, մեկնաբանություններ,տարածումների քանակ, Հղումների սեղմումներ	333.3

				ենք առնվազն 1000 հոգու իրազեկել)			
	Ընդամենը՝						2125.0
	ԱԱՀ ՝						425.0
	Ամբողջը ՝						2550.0

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032670, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց փող., շ. 22, բն. 118
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052222098971001, ՀՎՀՀ 01278077
info@weprodigi.com
Նախագահ՝
Ա. Ոփյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 2
«30» «01» 2025 թ.
N ԵԴ-02-2025 պայմանագրի

ՖԻՆԱՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Թրաֆիկինգի ռիսկերի մասին երիտասարդների իրազեկում» ծրագրի

	Ծախսատեսակի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Աշխատավարձ (ներառյալ հարկերը)***				
1.1	Ծրագրի ղեկավար	ամիս	3	66.67	200.0
1.2	Պրոյեկտ մենեջեր	ամիս	3	58.33	175.0
1.3	Կոնտենտ մենեջեր	ամիս	3	45.83	137.5
1.4	Վիզուալ կոնտենտի ղեկավար	ամիս	3	58.33	175.0
1.5	Գրաֆիկ դիզայներ	ամիս	3	45.83	137.5
1.6	Սոցիալական մեդիա մարկետինգի բաժնի ղեկավար	ամիս	3	58.33	175.0
1.7	Գովազդային մասնագետ	ամիս	3	41.66	125.0
1.8	Շարժական գրաֆիկայի մասնագետ	ամիս	3	41.66	125.0
	ԸՆԴԱՄԵՆԸ 1				**1250.0**
2	**Ծրագրային ծառայություններ**				
2.1	Թվային համակարգերում գովազդային ծառայության մատուցում (3 ամիս x 125.0 հազ. դրամ=375.0 հազ. դրամ)	հատ	1	375.0	375.0
2.2	Տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի ծառայություն (1 մարդ x 1 ամիս x 166.67 հազ. դրամ)	հատ	1	166.7	166.7
2.3	Կարծիքի առաջատարի (ինֆլյուենսերի) ծառայություն (1 մարդ x 1 ամիս x 333.3 հազ. դրամ)	հատ	1	333.3	333.3
	ԸՆԴԱՄԵՆԸ 2				**875.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ				**2125.0**
	ԱԱՀ**				**425.0**

	ԱՄԲՈՂՋԸ				2550.0

* Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով

** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032670, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց փող., շ. 22, բն. 118
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052222098971001, ՀՎՀՀ 01278077
info@weprodigi.com
Նախագահ՝
Ա. Ոփյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
«30» «01». 2025 թ.
N ԵԴ- 02 -2025 պայմանագրի

«ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ»

դրամաշնորհային ծրագիր

Կազմակերպության անունը - **Պրոդիջի ՍՊԸ**
Հապավումը (եթե առկա է) -
Ծրագրի անվանումը - **«ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ»**
Ծրագրի սկիզբ / ավարտ (օր/ամիս/տարի)[1] - **«01» «ապրիլ» 2025թ. - «30» «հունիս» 2025թ"**
Ծրագրի իրականացման վայրը/ աշխարհագրությունը (մարզ, համայնք) - **ՀՀ (Երևան, մարզեր)**
Կազմակերպության ղեկավար (անուն, հեռախոս, էլ. փոստ) **Տնօրեն: Աիդա Ոփյան,** **Հեռ": 098 787898,** **Mail: aida@prodigi.am**
Ծրագրի ղեկավար/համակարգող (անուն, հեռախոս, էլ. փոստ) **Օպերացիոն տնօրեն՝ Թագուհի Պետրոսյան** **Հեռ": 098 934554,** **Mail: taguhi@prodigi.am**
Կազմակերպության գործունեության հասցեն և կոնտակտային տվյալները (հեռախոս, ֆաքս և էլ.փոստ) **Հասցե: ՀՀ,ք"Երևան, Անաստաս Միկոյան 2/2,** **Հեռ": 044 224226** **Mail: info@weprodigi.com**
Ծրագրի բյուջե (ՀՀ դրամ) - **2,550,000 (երկու միլիոն հինգ հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ)**

[1] Ծրագրի իրականացումը՝ 2025 թվականի բյուջետային տարվա երկրորդ եռամսյակ: Ծրագրի հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետը՝ մինչև 2025 թվականի երրորդ եռամսյակ:

Համառոտագիր

Ծրագիրը նպատակ ունի Հայաստանի Հանրապետության երիտասարդների շրջանում բարձրացնել թրաֆիքինգի ռիսկերի վերաբերյալ իրազեկվածությունը՝ ներգրավելով առնվազն 200 շահառու: Դրամաշնորհային ծրագիրը կներառի միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են երիտասարդներին անհրաժեշտ գիտելիքների տրամադրելուն՝ թրաֆիքինգի վտանգների մասին իրազեկվելու, դրանց դիմակայելու և դրանցից խուսափելու համար: Միջոցառումները կանցկացվեն ինչպես Երևանի, այնպես էլ ՀՀ մարզերի երիտասարդների մասնակցությամբ՝ ապահովելով ծրագրի լայն տարածական ընդգրկվածություն և բարձր էֆֆեկտիվություն:

Ծրագրի նկարագրություն

Թրաֆիքինգը համաշխարհային խնդիր է, որի ազդեցությունը զգացվում է նաև Հայաստանում: Իրավական գիտելիքների պակասը և ապատեղեկացվածությունը հանգեցնում են նրան, որ հատկապես երիտասարդները հաճախ դառնում են թրաֆիքինգի զոհեր: Հետազոտությունները ցույց են տալիս, որ հասարակության լայն շերտերում թրաֆիքինգի մասին տեղեկացվածության մակարդակը դեռևս ցածր է: Մասնավորապես, երիտասարդները չունեն բավարար տեղեկություններ այն մասին, թե ինչպես ճանաչել թրաֆիքինգի վտանգները և ինչ քայլեր ձեռնարկել նման իրավիճակներում: Թրաֆիքինգի կանխարգելման ուղղությամբ իրականացվող ծրագրերը դեռևս բավարար չափով չեն ընդգրկում մարզային բնակչությանը, ինչն էլ ավելի է խորացնում տեղեկատվության անհասանելիության խնդիրը: Այս իրավիճակում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել թիրախային խմբերին իրազեկելու և նրանց պաշտպանվածությունը բարձրացնելու վրա: Ծրագիրը արձագանքում է այս հիմնախնդրին՝ հնարավորություն տալով երիտասարդներին ստանալ ոչ միայն ընդհանուր տեղեկություններ, այլև գործնական խորհուրդներ և աջակցություն: Կազմակերպվելիք արշավները կնպաստեն թեմայի նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը, իսկ տեղեկատվական նյութերի տարածումը՝ դրանց լայն հասանելիությանը: Այս ծրագրի իրականացումը չափազանց կարևոր է՝ հաշվի առնելով թրաֆիքինգի աճող վտանգները և դրա մասին իրազեկվածության ցածր մակարդակը Հայաստանում: Այն կդառնա երիտասարդներին պաշտպանության անհրաժեշտ հմտություններով զինելու կարևոր քայլ՝ հնարավորություն տալով նրանց ճանաչել թրաֆիքինգի ռիսկերը և դիմակայել դրանց: Սա կարևոր ներդրում է ավելի անվտանգ ապագա ձևավորելու գործում, որտեղ յուրաքանչյուր երիտասարդ կկարողանա իրացնել իր իրավունքները՝ առանց անօրինական և վտանգավոր իրավիճակների հանդիպելու:

Կազմակերպության փորձառությունը

Prodigi-ն միջազգային կազմակերպություն է, որը թվային մարքեթինգի ու production-ի ծառայություններ է մատուցում տարբեր երկրներում B2B ոլորտի կազմակերպություններին: 2017 թվականից հիմք դնելով Հայաստանում թվային մարքեթինգի ոլորտի զարգացմանը՝ այսօր մեր գործակալությունն ունի 40-ից ավել որակավորված մասնագետներ և իր գործունեությունն է ծավալում ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում, Մեծ Բրիտանիայում, ԱՄԷ-ում և այլ զարգացած երկրներում՝ մրցակցելով արդեն միջազգային առաջատար կազմակերպությունների հետ: Կազմակերպությունը նաև ունի մասնաճյուղ Ուզբեկստանում և ԱՄՆ-ում, գործունեություն է ծավալում նաև այդ երկրներում:

Պրոդիջի ՍՊԸ-ի Դրամաշնորհային մրցույթների մասնակցության և պետական գնման պայմանագրերի փորձերից առանձնացրել ենք մի քանիսը.

1. ***ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության** կողմից կազմակերպված **ԵՔ-ԴՄ-ԹԻ 05/23/1** ծածկագրով, **ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ** Դրամաշնորհային մրցույթում: 06.09.2023թ.-ից մինչև 15.12.2023թ. ընկած ժամանակահատվածում պատրաստել ենք 2 անիմացիոն հոլովակ ու հոլովակները տարածել տարբեր թվային հարթակներում ապահովելով պայմանագրով նախատեսված արդյունքների գերակատարում: Ծրագրի շրջանակներում՝ բարձրացնելով երիտասարդների շրջանում թրաֆիքինգի ռիսկերի մասին իրազեկվածության բարձրացմանը: Պայմանագրի բյուջեն կազմել է **1.576.000** ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ:
2. ***ՀՀ էկոնոմիկայի նախարարության** կողմից կազմակերպված **5-23zb** ծածկագրով, **Թվային և սոցիալական հարթակների վարման** համար կազմակերպված Դրամաշնորհային մրցույթում: 17.02.2023թ.-ից մինչև 15.12.2023թ. տարբեր գովազդային հարթակների միջոցով գովազդել ենք Հայաստանն ու Հայաստանի տեսարժան վայրերը՝ ծրագրի շրջանակներում՝ բարձրացնելով Հայաստանի ճանաճելությունը զբոսաշրջիկների աչքերում: Պայմանագրի բյուջեն կազմել է*

49.000.000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ: Պայմանագրով նախատեսված բոլոր ցուցանիշները գերակատրվել են մեր ընկերության կողմից:

3. ***ՀՀ Էկոնոմիկայի նախարարության** կողմից կազմակերպված **N86-24** ծածկագրով, **Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը** դրամաշնորհային մրցույթի ծրագրի շրջանակներում թվային և սոցիալական հարթակների վարման նպատակով 25.03.2023թ.-ից մինչև 19.12.2024թ. տարբեր գովազդային հարթակների միջոցով ներկայացրել ենք Հայաստանը և նրա տեսարժան վայրերը: Ծրագիրը նպատակ ուներ բարձրացնել Հայաստանի ճանաչելիությունը միջազգային զբոսաշրջիկների շրջանում: Պայմանագրի բյուջեն կազմել է **58,309,200** ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ: Մեր ընկերությունը հաջողությամբ իրականացրել է ծրագրի բոլոր պահանջները և գերազանցել նախատեսված ցուցանիշները՝ ապահովելով արդյունավետ և լայնածավալ գովազդային արշավ:*
4. ***Միջազգային Rescuing Hope** կազմակերպության համար կատարված աշխատանք: Rescuing Hope-ը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որի նպատակն էր իրազեկել Միացյալ Նահանգների հանրությանը սեռական թրաֆիքինգի մասին, կրթելու պոտենցիալ զոհերին և առաջին արձագանքողներին , ինչպես նաև այդ ամենը վերապրածներին և նրանց փաստաբաններին: Ծրագրի բյուջեն կազմել է շուրջ 880.000 ՀՀ դրամ (2190 ԱՄՆ դոլար): Ծրագրի մասին մանրամասները կգտնեք այս լինքում:*

Բացի վերևում նկարագրված փորձառությունը, ընտրել ենք ևս մեկ այլընտրանքային տարբերակ, նշելու, թե ինչու պետք է այս պրոյեկտի շրջանակներում որպես գործընկեր ընտրեք Պրոդիջի ՍՊԸ-ն:
Մանրամասները կգտնեք այս հղումով՝ https://youtu.be/clHDFwWbnVM :

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է բարձրացնել Հայաստանի երիտասարդների իրազեկվածությունը թրաֆիքինգի վտանգների մասին և նրանց տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ ու գործիքներ՝ նման իրավիճակներից պաշտպանվելու համար:
Ծրագրի նպատակն է բարձրացնել երիտասարդների իրազեկվածությունը թրաֆիքինգի ռիսկերի մասին՝ օգտագործելով տեղեկատվական և գովազդային տարբեր միջոցներ, որոնք ուղղված են լինելու թիրախային լսարանին: Այս նպատակին հասնելու համար նախատեսվում է կիրառել մի շարք արդյունավետ գործիքներ՝ ներգրավելով հնարավորինս շատ երիտասարդներ:

- *Ծրագրի շրջանակներում կստեղծվեն ինֆոգրաֆիկաներ, որը մատչելի և տեսողականորեն գրավիչ ձևաչափով կներկայացնի թրաֆիքինգի վտանգները և դրանցից պաշտպանվելու ուղիները:*
- *Կստեղծվեն վիդեոհոլովակներ, որոնք ծրագրվում է տարածել սոցիալական հարթակներում:*
- *Գովազդային արշավները կիրականան հատուկ մշակված ռազմավարություններով, որոնք ուղղված կլինեն երիտասարդների ակտիվ ներգրավվածությանը:*
- *Ծրագրի շրջանակներում կպատրաստվի թեստ, որը հնարավորություն կտա երիտասարդներին ստուգել իրենց գիտելիքները թրաֆիքինգի վերաբերյալ:*
- *Ծրագրի տեղեկատվական բաղադրիչը կամրապնդվի նաև PR հոդվածներով, որոնք կպատրաստվեն և կտարածվեն հայկական լրատվական կայքերում և սոցիալական ցանցերում: Հոդվածներում շեշտադրվելու է թրաֆիքինգի վտանգների կանխարգելման կարևորությունը:*

Գործողություններ

Այս ծրագրի շրջանակներում կոնկրետ գործողությունները լինելու են՝ ինֆոգրաֆիկայի պատրաստումը, 2 հատ 15 վայրկյան տևողությամբ անիմացիոն վիդեոների պատրաստումը, թրաֆիքինգի մասին երիտասարդների շրջանում իրազեկվածությունը բարձրացնող հատուկ թեստի պատրաստումը, PR հոդվածների պատրաստումը ու վերոնշյալ նյութերի տարածումը տարբեր գովազդային հարթակներում, որոնցից օգտվում են խոցելի խմբի երիտասարդները:

Ներկայացնել ամսական կտրվածքով աշխատանքային պլան ՝ համաձայն ստորև ներկայացված ձևաչափի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն ՊՐՈԴԻՋԻ ՍՊԸ

Ծրագիր «ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ»

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Պրոյեկտ մենեջմենթ	Պրոյեկտ մենեջեր				v	v	v						
2	Վիզուալ կոնտենտի ստեղծում	Վիզուալ կոնտենտի ղեկավար				v	v	v						
3	Կոնտենտի ստեղծում	Կոնտենտ մենեջեր				v	v	v						
4	Դիզայներական աշխատանքներ	Գրաֆիկ դիզայներ				v	v	v						
5	Սոց"մեդիա հարթակներում գովազդի տեղադրում և առաջխաղացում	Նախագծի ղեկավար, Սոց. մեդիա մարքեթինգի թիմի ղեկավար				v	v	v						
6	Հոլովակների պատրաստում	Շարժական գրաֆիկայի մասնագետ				v	v	v						
7	PR հոդվածի ստեղծում և տարածում	Նախագծի ղեկավար, Սոց. մեդիա մարքեթինգի թիմի ղեկավար, Կոնտենտ մենեջեր				v	v	v						
8	Կարծիքի առաջատարի ինտեգրում	Սոց. մեդիա մարքեթինգի թիմի ղեկավար				v	v	v						

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ծրագրի ուղղակի շահառուներն են երիտասարդները, որոնք տարբեր հանգամանքների բերումով կարող են հայտնվել թրաֆիքինգի զոհերի շարքում: Երիտասարդներից բացի, ծրագրի շահառուների շարքում են նաև այն մեծահասակները, որոնք ունեն դեռահաս տարիքի երեխաներ և բավարար տեղեկացված չեն թրաֆիքինգի վերաբերյալ հնարավոր վտանգների մասին: Ծրագրի հիմնական նպատակն է բարձրացնել իրազեկվածությունը թրաֆիքինգի վտանգների և կանխարգելման միջոցների վերաբերյալ՝ ապահովելով տեղեկատվության հասանելիություն բոլոր շահառուների համար: Այս նպատակին հասնելու համար ծրագրի շրջանակներում նախատեսվում է մարդկանց ներգրավվածությունը խթանել սոցիալական և թվային հարթակներում գովազդի տեղադրման միջոցով:

Ռիսկերի գնահատում *Ծրագրի իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը և դրանց հաղթահարման ռազմավարությունները ներկայացված են ստորև.*

Ռիսկ 1. Տեղեկատվական նյութերի բացասական հանրային արձագանք

Սոց. ցանցերում իրականացվող արշավների ռիսկային ուղղություններից մեկը բացասական արձագանքի ստացումն է կամ օգտատերերի հասկացման դժվարությունը, հատկապես նրանց մոտ, ովքեր չեն ճանաչում խնդրի խորությունը:

Կանխարգելման մեթոդ: Այս ռիսկը չեզոքացնելու կարևոր և առաջնային քայլը արձագանքների օպերատիվ մոնիթորինգն է, որը Պրոդիջիում իրականացվում է ամենօրյա սկզբունքով: Երկրորդը բացասական արձագանքների հետ աշխատանքն է, որի համար կազմակերպությունը արդեն իսկ ունի պատասխանների և հաղորդագրությունների ստեղծված ռազմավարական ուղղություններ: Նախատեսվում է օգտագործել երիտասարդներին հետաքրքրող և հասկանալի մեթոդներ թեմայի տարածման համար, ինչպիսիք են՝ սոցիարթակներում ինֆլուենսերների ինտեգրումը, տեսանյութերի տարածումը, հարցումներ և այլն:

Ռիսկ 2. Թիրախային խմբի ցածր ներգրավվածության ռիսկ

Կանխարգելման մեթոդ: Պրոդիջին նպատակ ունի իրականացնել թիրախային և արդյունավետ գովազդային արշավներ սոցիալական մեդիայի հարթակներում՝ ապահովելով ծրագրի հասանելիությունը հենց այն խմբերին, որոնք առավել վտանգի տակ են գտնվում թրաֆիքինգի հարցում: Գովազդային արշավները կկենտրոնանան հատկապես 18-30 տարեկան երիտասարդների վրա, որոնք բնակվում են ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում: Հարթակների ընտրությունը և գովազդային բյուջեի բաշխումը կիրականացվի մեր կողմից հավաքագրված ճշգրիտ տվյալների վրա հիմնված վերլուծության միջոցով՝ երաշխավորելով, որ իրազեկումները հասնեն նպատակային լսարանին: Արշավի բովանդակությունը կներառի տեսանյութեր, հետաքրքիր ինֆոգրաֆիկաներ և ներշնչող պատմություններ այն անձանցից, ովքեր կարողացել են հաղթահարել թրաֆիքինգի ռիսկերը: Տեղադրվելու են հատկապես այն հարթակներում, որտեղ երիտասարդները ամենաշատն են ակտիվ (օրինակ՝ Instagram, TikTok, Facebook): Բացի դրանից, նախատեսվում է համագործակցություն influencer-ի հետ, ինչը ուղղված է նպաստելու ուղերձի ավելի լայն տարածմանը և վստահելիության ամրապնդմանը: Այս մոտեցման շնորհիվ Պրոդիջին կկարողանա արդյունավետորեն օգտագործել գովազդային ռեսուրսները՝ հասցնելով ծրագրի հիմնական ուղերձները այն լսարանին, որը իսկապես կարիք ունի այդ տեղեկատվության, և միաժամանակ խրախուսելով նրանց ակտիվ մասնակցությունը ծրագրին:

Ռիսկ 3. երիտասարդների շրջանում վախի և անհանգստության աճ

Կանխարգելման մեթոդ: Ծրագրի իրականացումը հիմնված կլինի պրոֆեսիոնալ կերպով մատուցվող տեղեկատվության վրա, որը չի խթանում վախը, այլ նպաստում է անվտանգության զգացումի ստեղծմանը: Մեր նպատակն է տեղեկացնել երիտասարդներին թրաֆիքինգի ռիսկերի և վտանգների մասին, բայց միևնույն ժամանակ ապահովել, որ տեղեկատվությունը չհանգեցնի ավելորդ վախի կամ անհանգստության առաջացման:
Այս ռազմավարությունները կօգնեն նվազեցնել բացասական արձագանքները և կխթանեն ծրագրի համընդհանուր ընդունելությունը, դառնալով դրա հաջողության կարևոր բաղադրիչ:

Ծրագրի աշխատակազմը *Ծրագրում ներգրավված աշխատակազմի մասին ավելի մանրամասն տեղեկություն կարող եք ստանալ նաև կից ֆայլում:*

Հ/Հ	Անուն Ազգանուն	Պատասխանատվության շրջանակը	Աշխատակցի կամ փորձագետի փորձառությունը
1	Լիլիթ Վարդանյան	Նախագծի ղեկավար	Ընկերությունում աշխատում է շուրջ 6 տարի: Որպես Նախագծի ղեկավար աշխատում է արդեն 3 տարի: Ղեկավարել է այնպիսի պրոյեկտեներ այնպիսիք են ՀՀ ԷՆ Զբոսաշրջության Կոմիտեն, HSBC Հայաստան բանկը, Արարատ թանգարանը, Septolete միջազգային ընկերությունը իր KRKA ապրանքանիշով, միջազգային պրոյեկտներից՝ Rescuing Hope, HME և այլն:
2	Եվա Թովմասյան	Պրոյեկտ մենեջեր	Ընկերությունում որպես Պրոյեկտ մենեջեր աշխատում է 6 ամիս: Իրականացրել է 10+ վիդեոյի ստեղծման պրոյեկտներ:
3	Արևիկ Խամոյան	Կոնտենտ մենեջեր	Ընկերությունում աշխատում է շուրջ 1,5 տարի: Իրականացրել է կոնտենտի ստեղծում ՀՀ ԷՆ Զբոսաշրջության Կոմիտեի, HSBC Հայաստան բանկի համար, Արարատ թանգարանի, AEB-ի և շատ այլ հայաստանյան ու միջազգային պրոյեկտների համար:
4	Սիրանուշ Թովմասյան	Վիզուալ կոնտենտի ղեկավար	Ընկերությունում աշխատում է շուրջ 6 տարի: Իրականացրել է վիզուալ կոնտենտի ստեղծում այնպիսի ընկերությունների համար, ինչպիսիք են ՀՀ Էկոնոմիկայի Նախարարության Զբոսաշրջության Կոմիտեն, Արարատ թանգարանը, միջազգային պրոյեկտներից՝ DNV, Lane Health և այլն:
5	Աննա Հովհաննիսյան	Գրաֆիկ Դիզայներ	Ընկերությունում աշխատում է շուրջ 6 տարի: Իրականացրել է դիզայներական աշխատանքներ այնպիսի պրոյեկտեների համար, ինչպիսիք են Porsche, Bentley, Audi, DNV-ն, Hampton Capital-ը, Bentley Yerevan-ը և այլն:
6	Անահիտ Ոփյան	Սոց. մեդիա մարքեթինգի բաժնի ղեկավար	Ընկերությունում աշխատում է շուրջ 6 տարի: Որպես բաժնի ղեկավար աշխատում է արդեն 3 տարի: Ղեկավարել է այնպիսի պրոյեկտեներ այնպիսիք են ՀՀ ԷՆ Զբոսաշրջության Կոմիտեն, HSBC Հայաստան բանկը, Արարատ թանգարանը, Septolete միջազգային ընկերությունը իր KRKA ապրանքանիշով:
7	Ելենա Շհոյան	Սոցիալ. մեդիա գովազդային մասնագետ	Ընկերությունում աշխատում է շուրջ 6 ամիս: Գովազդային արշավներ է իրականացրել այնպիսի պրոյեկտների համար ինչպիսիք են ՀՀ ԷՆ Զբոսաշրջության Կոմիտեն, Երևանի Քաղաքապետարանը, Յունիբանկը, HSBC Հայաստան բանկը, Septolete միջազգային ընկերությունը իր KRKA ապրանքանիշով:
8	Տիգրան Հովհաննիսյան	Շարժական գրաֆիկայի մասնագետ	Ընկերությունում աշխատում է շուրջ 1 տարի: Անիմացիա ու իլուստրացոն աշխատանքներ է իրականացրել այնպիսի ընկերությունների համար, ինչպիսիք են ԿԳՄՄՆ-ն, HSBC Հայաստան բանկը, Coca Cola-ն, միջազգային պրոյեկտներից՝ Rescuing Hope, HME և այլն:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032670, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Հ. Հակոբյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց փող., շ. 22, բն. 118
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052222098971001, ՀՎՀՀ 01278077
info@weprodigi.com
Նախագահ՝
Ա. Ոփյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 4
« 30 » « 01 » 2025 թ.
N ԵԴ - 02-2025 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2025 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Փաստաթղթերն ընդունեց՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված 5
«30» «01» 2025 թ.
ԵԴ - 02 -2025 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

2.6 Խնդրում ենք նշել, ծրագրի ազդեցության վերլուծությունը՝ նշելով ծրագրին մասնակից երիտասարդների թիվը,

2.7 միջոցառմանն ընդգրկվելու ցանկություն հայտնած անձանց թվաքանակը,

2.8 միջոցառման իրականացման տարածքային ընդգրկվածությունը,

2.9 միջոցառման արդյունքի հասանելիությունը տարբեր հարթակներում,

2.10 մասնակիցների գոհունակությունը ծրագրի արդյունքներից,

2.11 ծրագրի իրականացման ընթացքում ստեղծված կայուն արժեքները,

2.12 ծրագրի շրջանակներում օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված ֆինանսական ծախսերը

NN ը/կ	Պետական միջոցների հաշվին իրականացվող միջոցառման										
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Փաստացի արդյունքները	միջոցառման իրականացման վերջնաժամկետ (ըստ պայմանագրի)	միջոցառման իրականացման վերջնաժամկետ (փաստացի)	հաշվետվության ներկայացման ժամկետը (ըստ պայմանագրի)	հաշվետվության ներկայացման ժամկետը (փաստացի)	պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Փաստացի Ծախսը (ՀՀ դրամ)
				Ընդամենը							

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032670, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Հ. Հակոբյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց փող., շ. 22, բն. 118
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052222098971001, ՀՎՀՀ 01278077
info@weprodigi.com
Նախագահ՝
Ա. Ոփյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 6
«30» «01» 2025 թ.
N ԵԴ -02-2025 պայմանագրի

Կազմակերպություն	Պետական մարմին
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում կազմակերպությունն իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.